

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 9-10, էջ 239)

Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի ճիշդ՝ ընդառաջ ելլելու ժամանակակից մշակութի եւ քաղաքակրթութեան պահանջներուն՝ կ'արտայայտուի անոր ամբողջ գործունէութեան մէջ, վարդապետական թէ՛ բարեկարգական. բայց իր գաղաթնակէտին կը հասնի Եկեղեցւոյ եւ արդի աշխարհի յարաբերութիւններուն նուիրուած հովուական Սահմանադրութեամբ, որու խորագիրն է «Եկեղեցիի ներկայ աշխարհի մէջ»¹: Հոն՝ Եկեղեցւոյ զոները կը բացուին հանուր աշխարհի վրայ, եւ Ժողովական Հայրերու խօսքը կ'ուղղուի ո'չ միայն քրիստոնեաներուն կամ Աստուծոյ մը հաւատքը դաւանողներուն, այլ ամէն մարդու՝ որ մղուած է մարդկութեան վիճակը բարւոյնելու տենչէն:

1. Կը կոչուի նաեւ «Gaudium et spes» (Ուրախութիւնն ու յոյսերը), բնագրին սկզբնական բառերէն, կամ իր նախկին ընդհանրացած կոչումով՝ «13րդ նախագիծ»։ Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի հրատարակած վաւերացումները կոչուեցան Սահմանադրութիւն (Constitutio), Վճռագիր (Decretum), Ֆայտարարութիւն (Declaratio): Տրուած չէ, սակայն, որեւէ պաշտօնական մեկնութիւն՝ այս եզրերու կանոնական զանազանութեան մասին: Ժողովի գործնականութիւնը կրնանք հետեւեցնել թէ՛ Սահմանադրութիւն կոչուեցան վաւերացումներէն կարեւորագոյնները, որոնց մէջ վարդապետական (doctrinal) տարբերակը հանդամանք ունի, եւ միւսներէն աւելի ընդարձակ են: Սահմանադրութիւններն ալ, իրենց պարունակութեան եւ նկարագրին համաձայն, ու-

Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի սոյն վաւերացումը կը շօշափէ բազմաթիւ հարցեր, կ'ուսումնասիրէ զանոնք բազմապիսի եղանակներով եւ կը դիտէ այլազան տեսանկիւններէ. կը քննէ հարցեր՝ որոնք կ'ընդգրկեն մարդկային կեանքի եւ ընկերութեան զանազան մակերեւոյթները, անոնց առօրեայ ու երկրաւոր իրողութեան մէջ. կը պրպտեն մարդը՝ ինչպէս որ է, անկախաբար՝ դաւանած հաւատքէն կամ որդեգրած դաւաժարախօսութենէն:

Տիեզերական Ժողովը կը մօտենայ այդ հարցերուն առանց նպատակ ունենալու յայտնել պարզապէս՝ ընկերարանական, տնտեսական կամ քաղաքակրթական տեսութիւն մը: Իր նպատակն է մօտենալ մարդուն, մօտենալով դայն շրջապատող

բոլորեցան դաւանական, ծիսական կամ հոգևորական: «Եկեղեցիի ներկայ աշխարհի մէջ» Սահմանադրութեան պատրաստութիւնը յանձնուած էր 60 եպիսկոպոսներէ բաղկացած միջազգային Յանձնախումբի մը, բոլորն ալ Ժողովական Հայրերէն: Յանձնախումբը իր աշխատանքները կատարած է 8 ենթախմբային խումբերու բաժնուած: Բացի Յանձնախումբի անդամներէն, խորհրդակցութեան հրաւիրուած են ու գործնականորէն նպաստած են Սահմանադրութեան յորինումին 50է աւելի եկեղեցական եւ աշխարհական մասնագէտներ, նաեւ իգական սեռէ, որոնք իրենց ճիւղերուն մէջ՝ միջազգային համբաւ կը վայելէին: Սահմանադրութիւնը պաշտօնապէս հրատարակուած է 1965ի Դեկտեմբեր 7ին:

հարցերուն. ճանչնալ մարդը՝ իր թանկարժեքեալ գոյութեան մէջ, իր առօրեայ եւ առանձին զրազանքներով ու մտահոգութիւններով, իր պայքարներով եւ յոյսերով. ու ճանչնալով մարդը՝ խօսիլ անոր հետ, խօսիլ ո'չ վերացական աշխարհի մը մասին, այլ՝ այն իրական աշխարհին, որուն մէջ արմատացած է անոր գոյութիւնը. որովհետեւ հոն է եւ ո'չ անկէ դուրս, անոր յօրինուածքներուն մէջ՝ որ ան կը սպասէ փրկարար յոյսի մը պատգամին: Տիեզերական Ժողովի մտածութիւնը մարդուն վրայ կը մագնիսանայ:

Եկեղեցին «հիւմանիզմ» մը կը ներկայացնէ աշխարհի: Ինքն ալ վստահ ու լատես աշխարհով կը նայի մարդուն եւ անոր իրազորութեան, հրճուածքով կ'ողջունէ անոր յաղթանակները, եւ արդի քաղաքակրթութեան ձօնած իրեւ մեծագոյն բարիքը կը նկատէ՝ մարդկութեան ստացած հասուն գիտակցութիւնը մարդկային ազատութեան, հաւասարութեան եւ արժանապատուութեան նկատմամբ, այն բոլոր գործնական եւ օրինաւոր հետեւանքներով, որոնք փոխակերպեցին ընկերութեան կեանքը եւ մարդոց միջեւ փոխյարաբերութիւնները: Անոնցմէ՝ որոնք մարդուն պաշտամունքը կը տածեն, մէկ բան կը խնդրէր Պօղոս 2-րդ հանապապետը, երբ 1965ի Դեկտ. 7ի պատմական ճառին մէջ, Տիեզ. Ժողովի խնդրոյ առարկայ Սահմանադրութեան իմաստը կը բացայայտէր. գիտակցել թէ «Մե'նք եւս, աւելի քան ուրիշ ո'չ ոք, մարդուն պաշտամունքը ունինք»:

1. - Անհաւասարակշռութիւններ եւ հարցականներ

Ժողովը կը փորձէ նախ վերլուծել «Մարդկային վիճակը ներկայ աշխարհի մէջ»: Կը նկարագրէ մարդկութեան սրբն թաց յառաջագիծութիւնը, յեղաշրջումը՝ կեանքի պայմաններու եւ մտածութիւններու, ընկերային կարգի եւ միջնէն իսկ բարոյական արժէքներու: Բայց իր ու-

շաղրութիւնը կը կեդրոնացնէ գլխաւորապէս անոնցմէ ծագող յոյսերուն եւ մղձաւանջներուն, անհաւասարակշռութիւններուն եւ խնդիրներուն վրայ: Իր լատես եւ յուսապատար հայեացքով հանդերձ, Ժողովը չ'անգիտանար եւ ո'չ ալ կ'անտեսէ աշխարհի կացութեան բարդութիւնները. կը դրէ առաջին իսկ տողերէն. «Մարդկութիւնը իր տրամադրութեան տակ ունեցած չէ՛ երբեք այսքան կարելիութիւններ, տնտեսական այսպիսի կարողութիւն. եւ սակայն, երկրագունդի բնակիչներէն ստուար զանգուած մը կը տառապի տակաւին անթուրթեամբ ու թշուառութեամբ...: Երբեք ունեցած չեն մարդիկ ազատութեան այսքան վառ գիտակցութիւն մը, բայց միաժամանակ երեւան կու գան նոր ձեւեր՝ ընկերային եւ հոգեկան ստրկութեան...»:

Ժողովը դիտել կու տայ թէ սխրալի յառաջգիծութիւններէ եւ կնճռոտ գոյափոխութիւններէ բարդուած կացութեան մը դիմաց, բազմաթիւ մարդիկ գիտարարութեան կ'ընդհարին՝ տարօրոշելու կեանքի մնայուն արժէքները, եւ զանոնք ձուլելու ներգաշնակօրէն՝ քաղաքակրթութեան նորանոր ելոյթներուն հետ: Այս երեւոյթներէն կը ծագին՝ ինչ որ Ժողովը կը կոչէ ներկայ աշխարհի անհաւասարակշռութիւնները: Անհաւասարակշռութիւն՝ անհատներու կեանքին մէջ, ընդմէջ արդի գործնական իմացողութեան եւ մտքի տեսական ու համադրական պահանջներուն, հաւաքական ազդեցութիւններու եւ անհատական մտածելակերպի, բարոյական իղճի եւ գործնական արդիւնաբերութեան, հետզհետէ ինքզինքը պարտադրող մասնագիտացումին եւ ընդհանուր զարգացումի հարկաւորութեան: Անհաւասարակշռութիւն՝ ընտանեկան կեանքին մէջ, հետեւանք՝ ազգայնական, տնտեսական եւ ընկերային պայմաններու ծանրութեան, մարդուն եւ կնոջ միջեւ հաստատուած նոր յարաբերութիւններուն. նմանապէս անհաւասարակշռութեան՝ ընդմէջ դասակարգերու եւ ցեղերու, խաղաղու-

թեան ի նպաստ կազմակերպութիւններու եւ ճիւղերու, եւ միւս կողմէ՝ հաւաքական հասարակութիւններու:

Բայց անհատներու եւ ընկերութիւններու կեանքը վրդովող այս բոլոր անհաւասարակշռութիւններուն տակ՝ կը ծածկուի աւելի խոր անհաւասարակշռութիւն մը՝ մարդուն իսկ սրտին մէջ. անհաւասարակշռութիւն՝ որ կը ծագի իրերամարտ հոսանքներու հակասութենէն: Արդարեւ՝ մինչ գիտական եւ մեքենարուեստական յառաջագիմութիւնը բոլորովին նոր փորձառութիւն մը կ'ընձեռէ մարդուն՝ իր կարողութիւններուն եւ մեծութեան նկատմամբ, անիկա միշտ աւելի կ'ունենայ առօրեայ ու բազմապիսի փորձառութիւնը իր սահմանաւորութեան: Մինչ վեհ դադափարներ խանդավառ ազդեցութիւն մը կը գործեն անոր վրայ եւ կը ստեղծեն ազնիւ տրամադրութիւններ, ան կը զգայ միաժամանակ մոզիչ հմայքը չարին, կը տեսնէ մանաւանդ դաժաժ համամատութիւնը՝ իր կատարած իրադրութեան եւ զինք ողբերգի տեսլականներուն միջեւ: Եթէ բազմաթիւ անհատներ, կուրցած՝ դադափարախօսական նախապաշարութիւններէ, կամ բարոյական խղճով մթազնած՝ կարող չեն նշմարել իրենց կեանքին մէջ մարդկային դոյութիւնը անդամատող այս ողբերգական երկուութիւնը, կարելի չէ չնմարել զայն ընկերութեան մէջ: Իրրեւ անհետեւի եւ հարեկիչ իրողութիւն մը կը բախին հանուրին տեսութեան՝ չարին ու վատութեան բռնատիրութիւնը, անարդարութեան եւ ատելութեան գործած նախճիրները, հակառակ այսքան զարգացումի եւ յառաջագիմութեան, հակառակ երկրի բոլոր մասերէն արձագանգող ազդակներուն՝ ի սէր խաղաղութեան, արդարութեան եւ ազատութեան:

Այսպիսի կացութեան մը առջեւ՝ ինքնաբերաբար կը ծագին քանի մը անխուսափելի հարցեր, որոնք կը դաչին մարդուն իսկութեան: Ո՞վ է մարդը, եւ ի՞նչ է անոր՝ դոյութեան ու գործունէութեան իմաստը. ի՞նչ է նշանակութիւնը տառա-

պանքին, չարին, մահուան, որոնք դոյութիւն ունին տակաւին ի հեճուկս այսքան յառաջագիմութիւններու. ի՞նչ օգուտ ունի եւ ի՞նչ բանի կը ձգտի մարդկային յառաջադասումը, որ կ'արժէ յաճախ մեծազին դոյութիւններ. ի՞նչ նպաստ կը բերէ մարդը ընկերութեան, ի՞նչ կը սպասէ անկէ. եւ հուսկ՝ ի՞նչ պիտի ըլլայ մահուան վաղորդայնը:

Ժողովական Հայրերը կը հաւատան թէ միայն Քրիստոսի բերած սիրոյ եւ փրկութեան պատգամն է որ կրնայ փառատել մարդկային հոգւոյն վարանումը այդ հոգեխնով հարցերուն առջեւ: Բայց այդ պատգամը պէտք էր մերձենալի դառնալ այսօրուան մարդուն: Ուստի, անհրաժեշտ էր նախ՝ որ ան չերեւէր իրրեւ անջատ իրականութիւն մը մարդուն դոյութենէն, իրրեւ յաւելումաժող տարր մը մարդկային ինքնարաւ լուծումներու վերայ՝ որ միայն արտաքին յարաբերութիւն մը պահէր մարդուն եւ անոր հարցերուն հետ: Հարկ էր զգալի դարձնել թէ անոնց նկատմամբ՝ քրիստոնէութիւնը ներքին արժէք մը կը բովանդակէ: Ժողովի որդեգրած հեռանկարին մէջ, որ կը մեկնի մարդէն եւ անոր թանձրացեալ կարիքներէն, քրիստոնէական պատգամը կը ներկայանայ իրապէս սերտ շարունակութեան մէջ՝ մարդկային դոյութեան, անոր արժէքներուն եւ տաղանայնորուն հետ:

Բայց կարելոր էր նաեւ որ Եկեղեցին խօսէր այսօրուան մարդոց լեզուն, զոր պիտի ընձեռէր իրեն արդի քաղաքակրթութիւնը: Ի՞նչպէս յաջողեցաւ Վատիկանեան Բ. Ժողովը իրադրոյթել, կամ դուցէ աւելի ճիշտ՝ սկզբնաւորել հանդիպումը երկու զանգուածային ոյժերուն՝ Եկեղեցւոյ եւ արդի քաղաքակրթութեան, նկատմամբ աշխարհի ճակատագրին: Կը համարիմ թէ ասոր հիմնական գաղտնիքը իր որդեգրած դիրքն էր՝ մարդկութեան եւ անոր հարցերուն հանդէպ: Ժողովը մերձեցաւ անոնց ո՛չ թէ դուրսէն դիտողի մը անտարբեր հանդամանքով, այլ իւրացնելով զանոնք,

զգալով եւ ապրելով իրրեւ ի՛ր սեպհականը՝ մարդոց ցաւերն ու դժուարութիւնները, մանաւանդ դոյութեան անծանօթին առջեւ մարդկային հոգին տուայտեցնող անձկութիւնը: Հասկացողութեան, տրամախօսութեան ու միասնաբար փնտռութիւնի այս անվեհեր ճիւղն է՝ որ կը թոյլատրէ Ժողովական Հայրերուն թափանցել մարդկութեան կարօտութիւններուն մէջ, ըմբռնել անոնց մտայնութենէն ու կեանքի պայմաններէն ծագող պահանջները. միեւնոյն ճիւղն է որ կու տայ Ժողովի դժած ուղղութիւններուն՝ այժմէական թարմութիւն մը. անոնք այլեւս չեն վերացական ու կաղապարաւոր բանաձեւումներ, ոչինչ ունին կեանքի իրականութեան անհաղորդ լուծումի մը անկեղծան դարկութենէն:

2. - Մարդուն կոչումը եւ անասունածութիւնը

Մարդկութեան ներկայ վիճակին ներածական վերլուծումէն ետք՝ Ժողովական սահմանադրութիւնը երկու ընդարձակ մասերու կը բաժնուի: Առաջին մասին մէջ, որուն ընդհանուր տիտղոսն է «Եկեղեցին եւ մարդկային կոչումը», կը ներկայացուի այս վերջինս իր բոլոր տարածութիւններով. մարդը՝ իր անձնական արժանապատուութեան մէջ, իր յարաբերութիւններուն մէջ՝ Աստուծոյ, ընկերութեան ու նիւթական տիեզերքին հետ, եւ հուսկ՝ Եկեղեցւոյ դերը աշխարհի մէջ, Եկեղեցւոյ եւ աշխարհի միջեւ փոխյարաբերութիւնները: Երկրորդ բաժինին մէջ քննութեան կ'ենթարկուին՝ ինչ ինչ աւելի մասնական բնոյթ կրող հարցեր. ընտանիք, մշակոյթ, տնտեսական-ընկերային կեանք, քաղաքական հասարակութիւն, խաղաղութիւն եւ պատերազմ, եւ հուսկ՝ միջազգային հասարակութիւնը:

Վատ. Բ. Ժողովին համար մարդուն կոչումին մէջ թափանցելու իրրեւ առաջին պայման կը ներկայանայ հարազատ դիտակցութիւնը մարդկային անձին ար-

ժանապատուութեան, որ իր դերադանց արտայայտութիւնն ունի մարդուն բարոյական ազատութեան եւ անհունին հետ հաղորդակցելու կարողութեան մէջ: Կրօնքը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ այս բարձրագոյն արտայայտութիւնը մարդկային արժանապատուութեան, սիրոյ եւ կեանքի անփոխարինելի հաղորդակցութիւն մը: Այս շրջանակին մէջ է որ Ժողովը կը քննէ անասունածութեան երեւոյթը, ոչ թէ հակաճառական դիրք մը որդեգրելով, այլ ջանալով յստակել պատճառները անոր ծագման եւ ծաւալումին: Եւ այս է ամէնէն ուշագրաւ եզրակացութիւններէն մէկը՝ որուն կը յանդի. անասունածութեան ծագումը կարելի չէ ինքն իր մէջ փնտռել: Զանազան արտաքին պատճառներու կարգին, հարկ է դասել նաեւ կրօնական ըմբռնումի եւ ապրումի անհարազատ ներկայացում մը հաւատացեալներու կողմէն: Ասոնք, իրենց ընթացքով, յաճախ աւելի ծածկած են քան թէ յայտնած՝ Աստուծոյ ճշմարիտ դիմադրիժը:

Ուստի, Ժողովը կը յանձնարարէ իր հետեւորդներուն՝ անասունածութեան երեւոյթին դիմաց որդեգրել տրամախօսութեան եւ մասնաւորապէս վերատեսութեան, վերաքննութեան դիրք մը: Այս եղաւ արդէն հիմնական ուղեղիժը Ժողովական ամբողջ գործունէութեան:

Կրօնքի եւ Աստուծոյ դոյութեան հարցը կը դուրս աւելի մարդուն յարաբերութեամբ, քան թէ տիեզերքի եւ բնութեան կարգին: Դարու մը մէջ՝ ուր քաղաքակրթութեան ընթացքը, մշակութային եւ իմաստասիրական ճգնաժամները կը կեդրոնանան մարդուն եւ անոր կարիքներուն վրայ, Աստուծոյ պահանջը ահա կը ցայտէ մարդկային սրտին խորքերէն, Աստուծոյ կը յայտնուի մարդուն՝ իրրեւ այն միակ իրականութիւնը, որ կարող է յապնել լիապէս անոր հոգին անհուն տենչերը: Աստուծոյ կը ներկայանայ մարդուն իրրեւ իրողութիւն մը, որ կը թափանցէ անոր ամբողջ ենթակայականութեան մէջ. ո՛չ թէ իրրեւ լոկ առարկայ մը, որուն անհրաժեշտութեան կը ծանօ-

Թանայ մարդը՝ իրմէ դուրս գտնուող իրա-
կանութեան մը, այսինքն՝ տիեզերքի վը-
րայ անդրադարձնալով: Այսպէս Աստուծոյ
դոյութիւնը կը դադրի համադր երեւելէ
երկրաչափական խնդիրի մը, եւ Աս-
տուծոյ անձանթ X-ի մը համապատաս-
խանող լուծիչ բանալին ըլլալէ: Աստու-
ծոյ դոյութիւնն ընդունիլը՝ իրրեւ կեն-
սական արժէք մը կ'երեւի մարդուն, ո-
րուն մէջ ան կը զգայ իր դոյութեան ճա-
կատագրին հետ սերտօրէն շաղկապուած
երկրնորանքի մը ներկայութիւնը:

Ժողովի այս մարդակերպն եւ թան-
ճրացեալ ուղղութիւնը, որով կը մերձե-
նայ Աստուծոյ դոյութեան հարցին, կը
բանայ դուրէ տրամախօսութեան նոր հե-
ռանկար մը՝ ժամանակակից մշակոյթի
անաստուած արտայայտութիւնն եր ու ի
հետ: Թողունք որ Սահմանադրութեան
ամբողջ յօդունմը ինքնին այդ հեռանկա-
րէն կ'առաջնորդուի:

Անաստուածներու եւ հաւատացեալնե-
րու միջեւ սկզբնական հանդիպումի մը ի-
րրեւ առանձնաշնորհեալ ասպարէզ՝ Ժո-
ղովը կը մատնանչէ միահամուռ աշխա-
տանքը ի նպաստ մարդկային բարօրու-
թեան, յառաջդիմութեան եւ խաղաղու-
թեան: Միաժամանակ կ'ուզէ փարատել
նախապաշարում մը՝ որ կրօնքի նկատ-
մամբ ծաւալած է Միջին Դարու կրօնա-
կան դադարաբաժանութեան ինչ ինչ ըմ-
բոսումներուն հետեւանքով: Այսինքն թէ՛
զերբնականի մը հաւատքը կ'ազատացնէ՝
զէթ մասամբ՝ երկրաւոր կեանքին եւ ի-
րողութիւններուն արժէքը: Ժողովը վը-
ռականօրէն կը յայտարարէ թէ Աստուծոյ
եւ հանդերձեալ կեանքի հաւատքը չի ջըն-
ջեր, ո'չ ալ կը նուազեցնէ կարեւորու-
թիւնը ժամանակաւոր հոգերու, այլ ընդ-
հակառակն՝ նոր շարժառիթներ եւս կ'ըն-
ձեռնէ մարդուն, նուիրուելու երկրաւոր
քաղաքին շինութեան: Ժողովի ընդգրկած
ամբողջական «հիմանիզմ»ին բնական
հետեւանքն է ասիկա, զոր կարելի է բա-
նաձեւել իրրեւ գրական վերաբերում մը՝
բնական ու ժամանակաւոր բոլոր արժէք-
ներուն հանդէպ:

3. - Մարդկային գործունէութիւնը

Անցողակի կատարուած հաւաստում մը
չէ ասիկա: Սահմանադրութեան երրորդ
դրոյթը ամբողջապէս նուիրուած է ուր-
ուագծելու իմաստը մարդկային գործու-
նէութեան: Նշանակալից է ինքնին խորա-
զերը. «Մարդկային գործունէութիւնը
տիեզերքի մէջ»: Բովանդակ զրուիւր տիե-
զերածաւալ հայեացք մը կը պարզէ ըն-
թերցողին: Մարդկային գործունէութիւ-
նը իր զանազան խաւերով ու նուաճում-
ներով՝ մաս կը կազմէ Աստուծոյ նախա-
կան ծրագրին եւ հաճութեան, որով ըս-
տեղծեց տիեզերքը: Գիտարուեստը (tech-
nique) մրցորդ մը չէ ստեղծարար Իմաս-
տութեան, եւ ո'չ ընդոտնիչ մը Նախա-
խնամութեան, այլ մասնակցութիւն մը՝
արարչական գործունէութեան, գործակ-
ցութիւն մը՝ Աստուծոյ սիրոյն, որ կը
ծաւալի տիեզերքի յեղաշրջումին մէջ:
Այսպէս է մարդկային գործունէութիւ-
նը, որովհետեւ արտայայտութիւն մըն է
մարդուն անձնականութեան եւ անձնա-
կան կարողութիւններուն, որով ան կը
վերարտադրէ իր մէջ անհամեմատօրէն
զերազանց ձեւով՝ քան որեւէ նիւթական
իր՝ զինք կերտողին պատկերը: Այդ ար-
տայայտութիւնը միանգամայն կատարե-
լագործում մըն է մարդկային անձնակա-
նութեան: Ուրեմն, մարդուն՝ եւ ոչ թէ
զայն շրջապատող աշխարհին մէջ կը հիմ-
նուի հուսկ՝ անոր գործունէութեան ար-
ժէքը. ասիկա կը չափուի մարդէն եւ ո'չ
տիեզերքի յեղաշրջումէն: Եկեղեցին հիա-
ցումով կը դիտէ աշխատանքն ու յառա-
ջադիմութիւնը՝ ամէն բանէ առաջ՝ ա-
նոնց այս սկզբնաւոր յարաբերութեան
համար, զոր ունին մարդկային անձին
արժանապատուութեան հետ: Այսպէս իր
հարազատ տարողութեան մէջ գիտուած՝
«technique»ը կը դադրի վտանգ մը ներ-
կայացնելէ մարդկային եւ հոգեկան ար-
ժէքներու մշակումին, կամ փորձութիւն
մը՝ մարդիկ իրրեւ իմացականութեամբ
օժտուած մեքենաներ նկատելու: Մանա-
կանք թէ նպաստամատուց ազդակ մը կը

դառնայ տիեզերքի «մարդկայնացումին»,
քանի որ մարդը կը մնայ ամէն գործու-
նէութեան եւ յառաջդիմութեան սկզբնա-
պատճառ եւ վախճան: Այս հիմնական ըս-
կըզբունքն է որ կու տայ մարդկային գոր-
ծունէութեան՝ իր բարոյական նկարագրի-
րը եւ կ'ուզէ ասոր գործադրութիւնը:

Մարդկային գործունէութեան եւ անոր
յարաբերակից երկրաւոր իրողութիւննե-
րու պարփակած ներքին արժէքներուն
գրուատիւրը առիթ կ'ընծայէ Տիեզ. Ժո-
ղովին՝ պաշտօնապէս եւ վճռականօրէն
յայտարարելու անկախութիւնը մարդուն
ժամանակաւոր գործունէութեան, ասոր
սեպհական բոլոր մարդերուն մէջ: Ասիկա
չի նշանակեր անշուշտ բացարձակ անկա-
խութիւն մը ճշմարտութեան եւ արդա-
րութեան օրէնքներէն. բայց ճշմարտու-
թեան մը ուղիղ գնահատանքը դրական
տուեալի մը նկատմամբ, կամ բարոյա-
կան սկզբունքի մը յարմարեցումը մասնա-
կան պարագաներու, կրնան տեղի տալ
ծանր ու մերթ գրեթէ անգամայնի սը-
խախնուր, երբ առաջնորդուին լոկ յա-
ռաջագունեան (aprioristique) դատանիչ-
ներէ: Ասիկա կը փաստեն պատմական
տիւրուր գէպքեր, որոնք ստեղծած են ան-
տեղի ընդգրկումութիւն մը Եկեղեցւոյ եւ
պետութեան, հաւատքի եւ գիտութեան
միջեւ: Խոհեմ եւ շրջահայեաց վերաբե-
րում՝ այն բոլոր հարցերուն առնչու-
թեամբ, որ հասարակաց դօտի մը կը ձե-
ւացնեն զերբնական կարգի եւ ժամանա-
կաւոր իրողութիւններու միջեւ, յատկա-
նշական զիծերէն մէկն է Վատ. Բ. Ժո-
ղովի ուղղութեան. այս ուղղութեան
ուսմիրաները հանդիսացած էին մերձա-
ւոր անցեալին մէջ՝ Լեւոն ԺԳ. եւ մա-
նաւանդ Պիոս ԺԲ. Քահանայապետները:

Ժողովը մարդկային գործունէութեան
շուրջ կ'անդրադառնայ նաեւ Եկեղեցւոյ
նուիրուած Սահմանադրութեան եւ աշ-
խարհականներու առաքելութեան Վճռա-
գրին մէջ: Նոր տեսակէտ մը՝ որ աւելի
խոր վերլուծումի կ'ենթարկուի այս վա-
ւերթութիւններուն մէջ, երկրաւոր հոգե-

րու յանձնառութեան եւ մարդուն կրօնա-
կան կատարելութեան միջեւ յարաբերու-
թիւնն է: Սոյն յանձնառութիւնը կը ներ-
կայանայ հոն ո'չ լոկ իրրեւ նպաստ մը
երկրաւոր քաղաքի շինութեան ու բարօ-
րութեան, իրրեւ արտայայտութիւն եւ
կատարելագործում մը մարդկային անձ-
նականութեան, այլ նաեւ իրրեւ գրական
միջոց մը անհատական եւ ընկերային սըր-
բացումի, երբ կը կատարուի պատշաճ
պայմաններով: Ժամանակաւոր դրադանք-
ները կը դադրին այլեւս չէզոք եւ մեկու-
սի, մանաւանդ թէ ժխտական դօտի մը
կազմելէ, ինչպէս նկատուած էին յա-
ճախ՝ միջին դարու մէջ, մարդուն կրօ-
նական ապրումին նկատմամբ:

Մարդկային գործունէութեան եւ առ-
հասարակ երկրաւոր իրողութիւններու
այս նոր գնահատանքը՝ զերբնական կար-
գին նկատմամբ, ուրիշ հիմնական քայլ
մը կը նշէ՝ քրիստոնէութեան եւ արդի
քաղաքակրթութեան հանդիպումի ճամ-
բուն մէջ: Եւ ասիկա տեղի կ'ունենայ
հիշտ պատմական այնպիսի պահու մը՝
երբ մարդիկ օրէ օր աւելի յստակ գիտակ-
ցութիւն մը կը ձեւացնեն մարդկային
գործունէութեան պարփակած ներքին
արժէքներուն շուրջ, որոնք անշուշտ յա-
րաբերական են միշտ մարդկային անձին:
Այս ուղղութեամբ մեծ դարկ մը կը ստա-
նան այսօր քրիստոնէական զաղափարա-
բանութեան նոր ճիւղեր, որոնք ծանօթ
են «աշխատանքի աստուածաբանութիւն»,
«երկրաւոր իրողութիւններու աստուածա-
բանութիւն», «աշխարհականներու աս-
տուածաբանութիւն» եւն... անուններով.
ասոնց նպատակն է ուսումնասիրել դըլ-
խաւորապէս բովանդակ ժամանակաւոր
կարգին արժէքը՝ մարդու զերբնական
վախճանին նկատմամբ: Նմանապէս՝ նոր
տեսանկիւնէ մը կը գիտուին մարդկային
սիրոյ իմաստը, ամուսնական կեանքը,
որդեկութեան յարուցած հարցերը եւն.,
ինչպէս պիտի տեսնենք յաջորդաբար:

(Շար. 2)

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՆԵԱՆ